

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
Օ Ր Ե Ն Ք Ը**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ  
ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ  
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆԵՐԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ**

**Գ Լ ՈՒ Խ Ի.  
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

**Հոդված 1. Սույն օրենքի կարգավորման առարկան ու նպատակները**

1. Սույն օրենքը կարգավորում է հաշմանդամության սահմանման, հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական, բժշկական և մասնագիտական վերականգնման, հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի միջավայրի ապահովման, նրանց կրթության, աշխատանքային գործունեության, առողջության պահպանման, ինչպես նաև հասարակական կյանքում բոլորի հետ հավասար մասնակցության համար անհրաժեշտ սոցիալական, իրավական և տնտեսական նվազագույն երաշխիքների հետ կապված իրավահարաբերությունները:

2. Սույն օրենքի նպատակն է պաշտպանել հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքները և ապահովել նրանց արդյունավետ սոցիալական ներառումը:

3. Սույն օրենքով Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար նախատեսված իրավունքներն ու երաշխիքները տարածվում են նաև օրենսդրությամբ սահմանված կարգով փախստականի կարգավիճակ ունեցող անձանց վրա:

**Հոդված 2. Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման մասին օրենսդրությունը**

1. Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությանն ու սոցիալական ներառմանն առնչվող իրավահարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, “Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին” ՄԱԿ-ի կոնվենցիայով, սույն օրենքով, ոլորտը կարգավորող այլ իրավական ակտերով և միջազգային պայմանագրերով:

### **Հողված 3. Սույն օրենքում օգտագործվող հասկացությունները**

Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները՝

**հաշմանդամություն ունեցող անձ**՝ անձ, որը առողջության խաթարմամբ պայմանավորված՝ կենսագործունեության սահմանափակման և մատչելի միջավայրի բացակայության պատճառով չի կարող իրացնել իր իրավունքներն ու հիմնարար ազատությունները և լիարժեք մասնակցել հասարակական կյանքին

**կենսագործունեություն**՝ անձի աշխատանքային գործունեությամբ զբաղվելու, ինքնասպասարկման, ինքնուրույն տեղաշարժվելու, կողմնորոշվելու, հաղորդակցվելու, սեփական վարքը հսկելու, ուսումնառելու /երեխաների համար՝ խաղալու/ ունակությունների /կարողությունների/ համակցություն

**աշխատունակության սահմանափակում**՝ անձի աշխատանքային գործունեությամբ զբաղվելու կարողության սահմանափակում

**բազային ծրագիր**՝ հաշմանդամություն ունեցող անձանց վերականգնողական ծրագիր, որն իրականացվում է պետական բյուջեի միջոցների հաշվին և ապահովում հաշմանդամություն ունեցող անձանց տրամադրվող նվազագույն վերականգնողական միջոցառումներ, մատուցվող ծառայություններ, հատկացվող տեխնիկական և օժանդակ միջոցներ

**հաղորդակցություն**՝ սույն օրենքի իմաստով՝ խոսակցական, շարժուձևերի, նշանների և տեքստերի պատկերման, Բրայլի, շոշափողական, ընթեռնելի տառերով տպագրության, ինչպես նաև մատչելի այլ տեղեկատվական և հաղորդակցային տեխնոլոգիաներ

**խտրականություն**՝ սույն օրենքի իմաստով հաշմանդամության հանգամանքով պայմանավորված ցանկացած տարբերակում, զրկում կամ սահմանափակում, որը խոչընդոտում է անձի իրավունքների և հիմնարար ազատությունների լիակատար իրացմանը

**համապատասխան հարմարություններ /շտկումներ/**՝ հաշմանդամություն ունեցող անձանց կրթության և ուսուցման, աշխատանքի, հաղորդակցման, մշակութային, մարզական գործունեության և այլ մասնակցության ձևերի ապահովմանն ու դրանց կազմակերպմանը նպաստող պայմաններ և հարմարություններ, որոնք ստեղծվում են հաշվի առնելով հաշմանդամի անհատական կարիքները

**բժշկասոցիալական փորձաքննություն**՝ անձի առողջության խաթարմամբ պայմանավորված՝ կենսագործունեության սահմանափակումների,

աշխատունակության կորստի աստիճանի և աշխատանքային գործունեություն իրականացնելու հնարավորությունների գնահատման հիման վրա՝ հաշմանդամության սահմանումը, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող անձանց վերականգնողական ներուժի, սոցիալական ներառման ձևերի և տեսակների որոշումը

**վերականգնողական անհատական ծրագիր՝** հաշմանդամություն ունեցող անձի համար մշակվող փաստաթուղթ, որը ներառում է բժշկական, սոցիալական և մասնագիտական վերականգնողական միջոցառումների ամբողջություն

**միջավայր** - հաշմանդամություն ունեցող անձի աշխատանքային, հասարակական և անձնական կյանքի պայմանները, ինչպես նաև ազատ տեղաշարժվելու, տրամադրվող սոցիալական ծառայություններից օգտվելու, անհրաժեշտ տեղեկատվություն ստանալու, շփվելու և հասարակական կյանքի բոլոր ոլորտներում մասնակցելու հնարավորության պայմաններ

**միջավայրի գործոններ** – արտաքին պայմաններ, որոնք դրական կամ բացասական ազդեցություն են ունենում հաշմանդամություն ունեցող անձի կյանքի վրա

**համընդհանուր դիզայն՝** միջավայրի, ծրագրերի, ապրանքների ու ծառայությունների դիզայն, որն առանց շտկումների և մասնագիտացված դիզայնի անհրաժեշտության, դրանք առավելագույնս օգտագործելի է դարձնում բոլոր մարդկանց համար՝ չբացառելով օժանդակ հարմարանքների կիրառումը հաշմանդամություն ունեցող անձանց որոշակի խմբերի համար:

## ԳԼՈՒԽ II.

### ՀԱՇՄԱՆԴԱՍՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆԵՐԱՌՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

**Հոդված 4. Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման գործընթացում պետական քաղաքականության հիմնական սկզբունքները**

1. Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման գործընթացում պետական քաղաքականության հիմնական սկզբունքներն են՝

1) հաշմանդամություն ունեցող անձի նկատմամբ խտրականության բացառումը,

2) հաշմանդամություն ունեցող անձի արժանապատվության, անձնական կյանքի անկախության նկատմամբ հարգանքը,

3) հասարակական կյանքի բոլոր ոլորտներում մատչելիությունը,

4) հաշմանդամություն ունեցող անձանց ուղղված սոցիալական ներառման միջոցառումների հասցեականությունը,

5) սոցիալական պաշտպանության տրամադրումը՝ ելնելով անձի աշխատունակության աստիճանից,

6) հասարակական կյանքում մասնակցության ապահովումը,

7) հաշմանդամություն ունեցող անձանց վերաբերող բոլոր գործողություններում հաշմանդամ երեխայի իրավունքների գերակայությունը,

8) հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման բնագավառում պետական մարմինների և հասարակական կազմակերպությունների համագործակցությունը,

9) հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման գործընթացում քաղաքացիական հասարակության մասնակցությունն ու աջակցությունը

2. Օրենքով սահմանված այն դրույթները, որոնք անհրաժեշտ են հաշմանդամություն ունեցող անձանց համար իրական հավասարության հասնելու ու այդ գործընթացը արագացնելու համար, չեն կարող դիտվել որպես խտրականություն:

**Հոդված 5. Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման գործընթացում պետական քաղաքականության հիմնական ուղղությունները**

1. Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման գործընթացում պետական քաղաքականության հիմնական ուղղություններն են՝

1) հաշմանդամություն ունեցող անձանց, իրենց իրավունքներից օգտվելու համար, հավասար հնարավորությունների ու իրավական հիմքերի ապահովում՝ անկախ հաշմանդամության առաջացման պատճառից, բնույթից, ծանրության աստիճանից,

2) հաշմանդամություն ունեցող անձանց պաշտպանություն ցանկացած շահագործումից և խտրականությունից,

3) հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ առաջացած կարծրատիպերի և նախապաշարումների դեմ պայքարին աջակցություն,

4) հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցության ապահովում իրենց կյանքի և գործունեության հետ կապված բոլոր հարցերի վերաբերյալ որոշումների քննարկման գործընթացին՝ նրանց համար մատչելի եղանակով,

5) հաշմանդամություն ունեցող անձանց ինքնուրույն կյանքի, ընտանեկան կամ դրան մոտ միջավայր ապահովելու համար պայմանների ստեղծում,

6) հաշմանդամություն ունեցող անձի՝ բնակավայր, կրթություն, մասնագիտություն, աշխատանք, սոցիալական և բժշկական օգնություն, ինչպես նաև ապրելու կամ ինքնադրսևորվելու համար անհրաժեշտ միջավայր, ազատ ընտրելու իրավունքի ապահովում,

7) հաշմանդամություն ունեցող անձանց համար համապատասխան հարմարությունների /շտկումների/ ներդրման միջոցով մատչելի պայմանների ապահովում,

8) աջակցություն հաշմանդամություն ունեցող անձանց՝ զբաղվելու օգտակար գործունեությամբ, ելնելով նրանց կարիքների առանձնահատկություններից և կարողություններից և հաշվի առնելով նրանց հետաքրքրություններն ու հնարավորությունները,

9) աջակցություն հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալ-վերականգնողական կենտրոնների ստեղծմանն ու նրանց գործունեության զարգացման գործընթացին,

10) աջակցում հաշմանդամություն ունեցող անձանց հիմնախնդիրներով զբաղվող հասարակական կազմակերպություններին,

11) հաշմանդամություն ունեցող անձանց հատուկ կարիքների բավարարմանն ուղղված համընդհանուր օգտագործման ապրանքների, ծառայությունների, սարքավորումների և շինությունների, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող անձանց համար անհրաժեշտ օժանդակ սարքերի և աջակցող տեխնոլոգիաների, նրանց կարիքներին համապատասխան տեղեկատվական և հաղորդակցության միջոցների և ծրագրերի (միջոցառումների) ներդրման խրախուսում,

12) վերականգնողական ծառայությունների մատչելիության և հասանելիության ապահովում,

13) հաշմանդամություն ունեցող անձանց հետ աշխատող համապատասխան անձնակազմի և մասնագետների ուսուցման, վերապատրաստման և վերաորակավորման գործընթացի ապահովում, ինչպես

նաև բոլոր ուսումնական ծրագրերում հաշմանդամության հիմնախնդիրների և համընդհանուր դիզայնի վերաբերյալ թեմաների ներառում,

14) հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման բնագավառում միջազգային համագործակցության զարգացում:

### ԳԼՈՒԽ III

#### ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆԵՐԱՌՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

##### **Հոդված 6. Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման համակարգը**

1. Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման համակարգը ներառում է՝ բժշկական, մասնագիտական և սոցիալական վերականգնողական ծառայություններ, ներառական կրթության համակարգի զարգացում, աշխատանքային երաշխիքների տրամադրում, հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության ակտիվ ծրագրերում ներգրավում, հաշմանդամություն ունեցող անձանց աջակցության տրամադրում, կենսաթոշակների և նպաստների վճարում, հասարակական կյանքի բոլոր ոլորտներում հավասար պայմանների հնարավորությունների և իրավունքների ապահովում:

2. Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման համակարգը ֆինանսավորվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի և օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների հաշվին:

##### **Հոդված 7. Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման համակարգի կառավարումը**

1. Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման համակարգի կառավարումը ենթադրում է՝ սոցիալական ներառման միջոցառումների պլանավորում, ղեկավարում, կազմակերպում, պատասխանատվությունների ու լիազորությունների բաշխում և վերահսկում:

2. Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման իրականացնող մարմիններն են՝

- 1) Հայաստանի Հանրապետության Կառավարությունը
- 2) Հայաստանի Հանրապետության Կառավարության լիազոր պետական մարմինը
- 3) Հայաստանի Հանրապետության պետական կառավարման այլ մարմինները
- 4) Տարածքային կառավարման մարմինները
- 5) Տեղական ինքնակառավարման մարմինները՝ օրենսդրությամբ սահմանված կարգով
- 6) Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող Ազգային հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով)
- 7) Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունները:

**Հոդված 8. Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման ոլորտում Հայաստանի Հանրապետության Կառավարության իրավասությունները**

1. Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման ոլորտում Հայաստանի Հանրապետության Կառավարությունը՝

- 1) համակարգում է ոլորտի պետական քաղաքականությունը,
- 2) հաստատում է հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման ռազմավարական ծրագրերը,
- 3) պետական բյուջեի նախագծի կազմում Ազգային ժողով է ներկայացնում հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման տարեկան ծրագիրը (այսուհետ՝ Տարեկան ծրագիր),
- 4) հաստատում է հաշմանդամություն ունեցող անձանց վերականգնման բազային ծրագիրը և դրա իրականացման կարգը,
- 5) հաստատում է հաշմանդամների բժշկասոցիալական փորձաքննությունն իրականացնելու և վերականգնման անհատական ծրագրերը մշակելու, իրականացնելու, ինչպես նաև բժշկասոցիալական փորձաքննության ոլորտում իրավասու պետական մարմինների գործունեության կարգերը,
- 6) հաստատում է բժշկասոցիալական փորձաքննության ժամանակ հաշմանդամության սահմանման չափանիշները,
- 7) հաստատում է սոցիալական ծառայությունների կանոնակարգերը, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառմանը նպաստող կենսագործունեության միջավայրի մատչելիությունն ապահովող նորմերը և կարգերը,
- 8) հաստատում է հաշմանդամություն ունեցող անձանց համար օրենքով նախատեսված նպաստների և արտոնությունների կամ օժանդակության այլ ձևերի տրամադրման կարգերը,
- 9) աջակցում է հաշմանդամություն ունեցող անձանց հիմնահարցերով զբաղվող հասարակական կազմակերպություններին,
- 10) իրականացնում է օրենքով սահմանված այլ լիազորություններ:

**Հոդված 9. Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման ոլորտում պետական կառավարման լիազորված մարմնի իրավասությունները**

1. Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման ոլորտում Հայաստանի Հանրապետության Կառավարության լիազորված պետական կառավարման մարմինը (այսուհետ՝ լիազորված մարմին) օրենսդրությամբ սահմանված կարգով՝

- 1) մշակում և իրականացնում է սույն ոլորտի պետական քաղաքականությունը,
- 2) մշակում է հաշմանդամություն ունեցող անձանց վերաբերող ռազմավարական ծրագրերը և ապահովում (համակարգում) դրա իրականացումը,
- 3) մշակում է հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման



- Տարեկան ծրագիրը և ապահովում (համակարգում) դրա իրականացումը,
- 4) մշակում է հաշմանդամություն ունեցող անձանց վերականգնման բազային ծրագիրը և ապահովում դրա իրականացումը,
  - 5) հաստատում է բժշկասոցիալական փորձաքննության ոլորտում իրավասու պետական մարմինների կառուցվածքը, համակարգում և ապահովում է դրանց գործունեությունը,
  - 6) համակարգում է հաշմանդամություն ունեցող անձանց վերականգնողական ծառայություններ տրամադրող կազմակերպությունների գործունեությունը.
  - 7) կազմակերպում է բժշկասոցիալական փորձաքննության և վերականգնման ոլորտի մասնագետների պատրաստումն ու վերապատրաստումը,
  - 8) աջակցում է հաշմանդամության հիմնահարցերի լուծմանն ուղղված գիտական հետազոտությունների իրականացմանը,
  - 9) համագործակցում է հաշմանդամություն ունեցող անձանց հիմնահարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունների հետ,
  - 10) ստեղծում և վարում է հաշմանդամություն ունեցող անձանց տվյալների շտեմարանը,
  - 11) իրականացնում է օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված այլ լիազորություններ:

## ԳԼՈՒԽ IV.

### ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆԵՐԱՌՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

#### **Հոդված 10. Հաշմանդամություն ունեցող անձանց հիմնական իրավունքները**

Հաշմանդամություն ունեցող անձինք ունեն Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով անձանց համար նախատեսված բոլոր իրավունքները և պարտականությունները:

#### **Հոդված 11. Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման նպատակով մատչելի միջավայրի ապահովումը**

1. Տարածքային պլանավորման, սոցիալական ենթակառուցվածքների, շենքերի, շինությունների, հասարակական տրանսպորտի օբյեկտների և նրանց շրջակա միջավայրի նախագծման, տեղեկատվական համակարգի հարմարեցման ժամանակ պետք է հաշվի առնվեն հաշմանդամություն ունեցող անձանց համար հասարակական կյանքի բոլոր ոլորտներում մատչելի միջավայր ապահովելու պահանջները: Մատչելի միջավայր ապահովելու պահանջների չափանիշները և նրանց իրականացման ժամկետները սահմանում է Հայաստանի Հանրապետության Կառավարությունը:

2. Գործող ենթակառուցվածքները և շինությունները ենթակա են հարմարեցման հաշմանդամություն ունեցող անձանց համար:

Սույն դրույթը կիրականացվի փուլերով՝ Հայաստանի Հանրապետության Կառավարության սահմանած կարգով:

3. Հաշմանդամություն ունեցող անձանց համար նոր կառուցվող սոցիալական ենթակառուցվածքների, շենքերի, շինությունների, հասարակական տրանսպորտի օբյեկտների և նրանց շրջակա միջավայրի մատչելիության ապահովման պահանջների խախտումը առաջացնում է օրենքով սահմանված պատասխանատվություն:

4. Հաշմանդամություն ունեցող անձանց համար, իրենց անհատական կարիքներից ելնելով, համապատասխան տեղեկատվական տեխնոլոգիաների և ծրագրերի մշակումն ու տեխնիկայի կամ վերականգնողական պարագաների տրամադրումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության Կառավարության լիազոր պետական մարմինը:

#### **Հոդված 12. Տեղեկատվության տրամադրում**

1. Հաշմանդամություն ունեցող անձանց համար տեղեկատվության մատչելիությունն ապահովում է Հայաստանի Հանրապետության Կառավարության լիազոր մարմինը՝ Հայաստանի Հանրապետության Կառավարության սահմանած կարգով:

2. Հաշմանդամություն ունեցող անձանց տեղեկատվությունը տրամադրվում է նրանց համար մատչելի ձևով:

### **Հոդված 13 . Հաշմանդամություն ունեցող անձանց կրթության իրավունքը**

1. Հաշմանդամություն ունեցող անձինք իրավունք ունեն ստանալու նախադպրոցական դաստիարակություն, արտադպրոցական ուսուցում, հանրակրթական, նախնական մասնագիտական (արհեստագործական), միջին-մասնագիտական, բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթություն, ինչպես նաև զբաղվել գիտական գործունեությամբ՝ սույն օրենքի և Հայաստանի Հանրապետության կրթության ոլորտը կարգավորող օրենքների դրույթներին համապատասխան:

2. Կրթության բնագավառում Հայաստանի Հանրապետության Կառավարության լիազորված մարմինները հաշմանդամություն ունեցող անձանց համար ապահովում են համապատասխան տեխնոլոգիաների կիրառմամբ կրթության մատչելի ու հավասար պայմաններ, ներառական կրթության համակարգի ներդրման և զարգացման գործընթացներում:

3. Բարձրագույն և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում քննությունների ընթացքում հաշմանդամություն ունեցող անձանց համար ապահովվում են մյուս դիմորդների հետ հավասար պայմաններ:

4. Ընդունելության քննությունները դրական գնահատականներով հանձնած հաշմանդամություն ունեցող անձինք, այլ հավասար պայմանների դեպքում, օգտվում են պետական և հավատարմագրված ոչ պետական միջին մասնագիտական կամ բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունվելու առաջնահերթ իրավունքից:

5. Ընդունելության քննությունները դրական գնահատականներով հանձնած 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամություն և “հաշմանդամ երեխա” կարգավիճակ ունեցող անձինք ընդունվում են պետական միջին մասնագիտական կամ բարձրագույն ուսումնական հաստատությունների անվճար համակարգ՝ վճարովի համակարգի համար առնվազն անցումային միավորներ հավաքելու դեպքում:

6. Սույն հոդվածի հինգերորդ մասով սահմանված հիմքով տվյալ ուսումնական հաստատություն ընդունված և սովորող (ուսումնառող) անձանց կրթությունը և ուսուցումը կազմակերպվում է պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ:

7. Սույն հոդվածի հինգերորդ մասով սահմանված հիմքերով պետական բարձրագույն և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների անվճար համակարգում սովորող 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամություն և “հաշմանդամ երեխա” կարգավիճակ ունեցող անձինք տեղափոխվում են տվյալ ուսումնական հաստատության վճարովի համակարգ, եթե ուսումնառության ընթացքում կատարված բժշկասոցիալական վերափորձաքննության արդյունքում չեն ճանաչվել հաշմանդամություն ունեցող անձ:

8. Պետական բարձրագույն կամ միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների վճարովի համակարգում սովորողները, ուսումնառության ընթացքում 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձի կամ “հաշմանդամ երեխա” կարգավիճակ ստանալու դեպքում՝ տեղափոխվում են տվյալ ուսումնական հաստատության անվճար ուսուցման համակարգ:

9. Սույն հոդվածի 5-րդ մասով սահմանված հիմքերով պետական մասնագիտական ուսումնական հաստատություններ ընդունված հաշմանդամություն ունեցող անձանց ուսման ծախսերը կատարվում են պետական բյուջեի միջոցների հաշվին:

#### **Հոդված 14. Հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքային իրավունքը և զբաղվածության ապահովումը**

1. Հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքային իրավունքները, երաշխիքները և զբաղվածության ապահովման հարաբերությունները կարգավորվում են աշխատանքային օրենսդրությամբ, զբաղվածության մասին օրենսդրությամբ, սույն օրենքով, ինչպես նաև այլ իրավական ակտերով:

2. Գործատուների համար սահմանվում են հաշմանդամություն ունեցող աշխատող անձանց քվոտաներ՝ Հայաստանի Հանրապետության Կառավարության սահմանած կարգով:

3. Կազմակերպությունների համար սահմանվում է հաշմանդամների աշխատանքի տեղավորման համար աշխատատեղերի նորմատիվ՝ աշխատողների ընդհանուր թվի 5 տոկոսի չափով: Եթե կազմակերպությունն ունի տասից մինչև քսան աշխատող, ապա նորմատիվը սահմանվում է մեկ աշխատատեղի չափով:

4. Սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված նորմատիվները չպահպանելն առաջացնում է տուգանքի նշանակում գործատուի նկատմամբ՝ «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածով սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի չափով:

5. Սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված և պետական բյուջե վճարված տուգանքների գումարներն օգտագործվում են հաշմանդամների սոցիալական, աշխատանքային, մասնագիտական վերականգնման, ինչպես նաև հաշմանդամների աշխատանքի տեղավորման նպատակով:

6. Սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված տուգանքների գումարները պետական բյուջե վճարման կարգն ու ժամկետները, ինչպես նաև այդ միջոցների կուտակման, հաշվառման և նպատակային օգտագործման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության Կառավարությունը:

#### **Հոդված 15. Հաշմանդամություն ունեցող անձանց վերականգնումը**

Հաշմանդամություն ունեցող անձանց վերականգնումը ներառում է բժշկական, մասնագիտական և սոցիալական միջոցառումներ, որոնք պետք է ուղղված լինեն հաշմանդամություն ունեցող անձի կենսագործունեության սահմանափակման վերացմանը կամ հնարավորինս նվազեցմանը և սոցիալական ներառմանը:

Վերականգնողական միջոցառումները իրականացվում են հաշմանդամություն ունեցող անձի առողջության, աշխատունակության և սոցիալական կարգավիճակի վերականգնման նպատակով, որը նպաստում է նրա նյութական և սոցիալական անկախությանը, հասարակական կյանքին համակողմանի մասնակցությանն ու իրավահավասարությանը:

Հաշմանդամություն ունեցող անձի վերականգնումն իրականացվում է հաշմանդամություն ունեցող անձի վերականգնման անհատական ծրագրին համապատասխան:

#### **Հոդված 16. Հաշմանդամություն ունեցող անձանց բժշկական վերականգնումը**

Բժշկական վերականգնումը ներառում է վերականգնողական բժշկական օգնությունը, պլաստիկ վերակառուցողական վիրաբուժությունը, պրոթեզաօրթոպեդիկ պարագաներով, վերականգնողական և տեխնիկական այլ միջոցներով ապահովումը: Բժշկական վերականգնման մեջ ներառվող բժշկական օգնության և սպասարկման տեսակները կազմակերպվում են ամբուլատոր կամ հիվանդանոցային ձևով, ներառյալ դրանց իրականացումը առողջարաններում:

Բժշկական վերականգնումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության առողջապահության և սոցիալական պաշտպանության համակարգի մարմինների, գերատեսչական, ապահովագրական և բարեգործական բժշկական կազմակերպությունների կողմից:

#### **Հոդված 17. Հաշմանդամություն ունեցող անձանց մասնագիտական վերականգնումը**

1. Մասնագիտական վերականգնումն ուղղված է հաշմանդամություն ունեցող անձանց աշխատունակության վերականգնմանը և զարգացմանը, ինչպես նաև աշխատելու հնարավորության մեծացմանը:

2. Մասնագիտական վերականգնումը ներառում է մասնագիտական կողմնորոշումը, մասնագիտական կրթությունը, մասնագիտական հարմարվողականությունը և աշխատանքի տեղավորման գործընթացը:

3. Առանձնացվում են մասնագիտական վերականգնմանն ուղղված հիմնական հետևյալ ծառայությունները՝ խորհրդատվության տրամադրում, մասնագիտական կողմնորոշում, մասնագիտական կարողությունների և հմտությունների գնահատում, վերականգնում, որակավորման բարձրացման, վերապատրաստման և վերաորակավորման միջոցով նոր կարողությունների ու հմտությունների զարգացում, ինչպես նաև աշխատանքի տեղավորում:

4. Մասնագիտական վերականգնմանն ուղղված ծառայությունների տրամադրման գործընթացը կազմակերպում է Հայաստանի Հանրապետության Կառավարության լիազոր պետական մարմինը:

**Հոդված 18. Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական վերականգնումը**

1. Սոցիալական վերականգնումը ներառում է սոցիալ-միջավայրային կողմնորոշումը, սոցիալ-կենցաղային հարմարեցումը, սոցիալ-հոգեբանական խորհրդատվությունը և հարմարումը, տեխնիկական միջոցներով ապահովումը, ինչպես նաև դրանց օգտագործման վերաբերյալ գիտելիքների տրամադրումը:

2. Սոցիալ-կենցաղային վերականգնողական ծառայությունների տրամադրման նպատակն է վերականգնել հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական, ինչպես նաև ինքնուրույն ապրելու հմտությունները: Սոցիալական վերականգնողական ծառայությունները նպաստում են կրթություն ստանալու, աշխատաշուկայում մրցունակության բարձրացման, ինչպես նաև այլ հասարակական ոլորտներում մասնակցության հնարավորությանը:

3. Սոցիալ-կենցաղային վերականգնողական ծառայությունները ներառում են՝ ինքնուրույն ապրելու հմտությունների պահպանում և վերականգնում, նոր հմտությունների, ունակությունների ձեռքբերում, կրթություն ստանալու և աշխատելու մոտիվացիայի բարձրացում, մշակութային, մարզական և այլ ունակությունների զարգացում:

4. Սոցիալական վերականգնողական ծառայությունների տրամադրման գործընթացը կազմակերպում են սոցիալական ծառայություններ մատուցող տարածքային մարմինները, աշխատանքները համակարգում են Հայաստանի Հանրապետության Կառավարության լիազոր մարմինները:

**Հոդված 19. Հաշմանդամություն ունեցող անձի վերականգնողական անհատական ծրագիրը**

1. Հաշմանդամություն ունեցող անձանց բժշկական, մասնագիտական և սոցիալական վերականգնումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության Կառավարության սահմանած կարգով՝ բժշկասոցիալական փորձաքննության ոլորտում իրավասու պետական մարմնի հաստատած, հաշմանդամների վերականգնողական բազային ծրագրին համապատասխան մշակված վերականգնողական անհատական ծրագրով:

2. Հաշմանդամություն ունեցող անձի համար վերականգնման անհատական ծրագիրն ունի երաշխավորական բնույթ և կարող է իրագործվել նրա դիմումի համաձայն:

Վերականգնողական անհատական ծրագիրը համապատասխան մարմինների կողմից ենթակա է պարտադիր կատարման:

Վերականգնողական անհատական ծրագրի իրագործումը համակարգում է լիազորված մարմինը:

**Հոդված 20. Հաշմանդամություն ունեցող անձանց վերականգնողական բազային ծրագիրը**

1. Հաշմանդամություն ունեցող անձանց վերականգնողական բազային ծրագիրը՝ պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվող,

հաշմանդամություն ունեցող անձանց տրամադրվող նվազագույն վերականգնողական միջոցառումների, մատուցվող ծառայությունների, հատկացվող տեխնիկական և օժանդակ միջոցների երաշխավորված ցանկ է:

2. Հաշմանդամություն ունեցող անձանց վերականգնողական բազային ծրագիրը և դրա իրականացման կարգը հաստատում է Հայաստանի Հանրապետության Կառավարությունը:

### **Հոդված 21. Հաշմանդամություն ունեցող անձանց առողջության պահպանումն ու վերականգնումը**

1. Հաշմանդամություն ունեցող անձինք ունեն անվճար կամ արտոնյալ պայմաններով առողջապահական ծառայություններ ստանալու իրավունք:

2. Հայաստանի Հանրապետության Կառավարության համապատասխան լիազոր պետական մարմինը՝

1) ապահովում է առողջապահական ծառայությունների մատչելիությունը հաշմանդամություն ունեցող անձանց համար,

2) երաշխավորում է հաշմանդամություն ունեցող անձանց առողջության պահպանման, վերականգնման, բժշկական օգնություն և սպասարկում անվճար կամ արտոնյալ պայմաններով ստանալու իրավունքը,

3) ապահովում է մատուցվող առողջապահական ծառայությունների, ներառյալ վաղ հայտնաբերման և միջամտության ծառայությունների, տրամադրումը անհատի կարիքների և ներուժի մասնագիտական գնահատման վրա:

3. Հաշմանդամություն ունեցող անձինք ունեն անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղեր ստանալու իրավունք՝ օրենքով սահմանված կարգով:

4. Առանց հաշմանդամություն ունեցող անձի կամ նրա օրինական ներկայացուցչի համաձայնության, արգելվում է հաշմանդամություն ունեցող անձին առողջության վերականգնման նպատակով տեղափոխել, կամ պահել մասնագիտացված հաստատություններում կամ այլ վայրում, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

### **Հոդված 22. Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանությունը**

1. Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանությունը իրականացվում է հետևյալ ձևերով՝

1) դրամական վճարումներ, այդ թվում՝

կենսաթոշակներ կամ նպաստներ,

նպատակային վճարումներ և փոխհատուցումներ,

2) արտոնությունների տրամադրում,

3) վերականգնման ծառայությունների տրամադրում,

4) խնամքի և սոցիալական սպասարկման ծառայությունների տրամադրում,

5) իրավական և մասնագիտական խորհրդատվություն,

6) պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական տեխնիկական ու այլ օժանդակ միջոցներով անվճար ապահովում,

7) բնակարանային պայմանների բարելավում՝ պետական ծրագրերում հաշմանդամություն ունեցող անձանց ընդգրկելու կամ պետական բնակարանային շինարարության ֆոնդից նրանց համար որոշակի չափաքանակ սահմանելու միջոցով:

2. “Հաշմանդամ երեխա” կարգավիճակ և անաշխատունակ՝ մշտական խնամքի կարիք ունեցող անձանց խնամողներին /եթե նրանք չեն աշխատում և չեն ստանում կենսաթոշակ/ նշանակվում է խնամքի նպաստ:

3. Սույն հոդվածի 1-ին կետի 1-ին, 2-րդ, 4-րդ և 7-րդ ենթակետերով նախատեսված սոցիալական պաշտպանության ձևերը տրամադրվում են էլնելով անձի պահպանված աշխատունակության աստիճանից՝ Հայաստանի Հանրապետության Կառավարության սահմանած կարգով:

### **Հոդված 23. Ազատագրկման դատապարտվելու դեպքում հաշմանդամություն ունեցող անձանց համար ապահովվող պայմանները**

1. Ազատագրկման վայրում գտնվող հաշմանդամություն ունեցող անձանց համար պետք է ապահովվեն մատչելի և հարմարեցված պայմաններ:

2. Ազատագրկման վայրերում հաշմանդամություն ունեցող անձը պետք է՝

1) արժանանա մարդասիրական և նրա մարդկային արժանապատվության նկատմամբ հարգալից վերաբերմունքի՝ հաշվի առնելով հաշմանդամությամբ պայմանավորված նրա պահանջմունքները,

2) ստանա մատչելի և անարգել տեղեկատվություն՝ ձերբակալության, կալանավորման կամ ազատագրկման պատճառների ու պայմանների մասին,

3) ստանա անարգել և իր համար մատչելի ձևով իրավական, բժշկական, սոցիալ-հոգեբանական և այլ անհրաժեշտ օգնություն:

3. Ազատագրկման վայրում գտնվող անձանց հաշմանդամություն սահմանելու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության Կառավարությունը:

### **Հոդված 24. Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական սպասարկումը և խնամքը բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններում և տնային պայմաններում**

1. Խնամքի և սոցիալական սպասարկման կարիք ունեցող հաշմանդամություն ունեցող և “հաշմանդամ երեխա” կարգավիճակ ունեցող անձանց խնամքն ու սոցիալական սպասարկումն իրականացվում են բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններում, 18 տարեկանից բարձր տարիքի հաշմանդամություն ունեցող անձանց համար՝ նաև տնային պայմաններում:

2. Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններում գտնվող և տնային պայմաններում սպասարկվող հաշմանդամություն ունեցող անձանց տրամադրվում են կենցաղային սպասարկման, առաջնային բժշկական օգնություն և սոցիալ-հոգեբանական ու իրավաբանական խորհրդատվություն:



3. Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական սպասարկման և խնամքի իրականացման կարգը ու պայմանները սահմանում է Հայաստանի Հանրապետության Կառավարությունը:

**Հոդված 25. Հաշմանդամություն ունեցող անձանց տրանսպորտային սպասարկումը**

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով փոխադրումներ իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթի անցկացման կարգում, որպես պարտադիր պայման, պետք է ամրագրվի հաշմանդամների համար հարմարեցված տրանսպորտային միջոցների նվազագույն քանակը:

2. 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամություն և “հաշմանդամ երեխա” կարգավիճակ ունեցող անձինք իրավունք ունեն անվճար երթևեկելու ներքաղաքային տրանսպորտով /բացառությամբ տաքսուց/:

**Հոդված 26 . Մշակութային և մարզական կյանքին մասնակցություն**

1. Հաշմանդամություն ունեցող անձանց երաշխավորվում է մշակութային և մարզական կյանքին մասնակցելու իրավունքը:

2. Հաշմանդամություն ունեցող անձանց համար ստեղծվում են մատչելի պայմաններ բոլորին հավասար օգտվելու մշակութային, մարզական, զբոսաշրջային կամ ազատ ժամանակի կազմակերպման այլ վայրերից, համապատասխան գույքից, ինչպես նաև դրանցում կազմակերպվող միջոցառումներից: Մշակութային և մարզական միջոցառումների կազմակերպիչները պարտավոր են հաշմանդամություն ունեցող անձանց համար նախատեսել որոշակի քանակությամբ հարմարեցված տեղեր՝ Հայաստանի Հանրապետության Կառավարության սահմանած չափանիշներով և ժամկետներով:

3. Պետությունը՝

1) ապահովում և խրախուսում է հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցությունը բոլոր մակարդակներում անցկացվող մարզական միջոցառումներին, ներառյալ հատուկ օլիմպիկ և պարաօլիմպիկ ու սուրդօլիմպիկ ձևերը,

2) աջակցում է հաշմանդամություն ունեցող անձանց մշակութային ծառայություններից օգտվելուն և նրանց մասնակցությամբ կազմակերպվող բոլոր տեսակի միջոցառումներին:

**Հոդված 27. Հաշմանդամության վիճակագրություն և տվյալների շտեմարանի ձևավորումը**

1. Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությանն ուղղված քաղաքականության մշակման և իրականացման նպատակով Հայաստանի Հանրապետության Կառավարության լիազոր պետական մարմինը

իրականացնում է հաշմանդամություն ունեցող անձանց մասին վիճակագրական տվյալների հավաքագրումը, վերլուծությունը և համակարգումը:

1) Տեղեկատվության հավաքագրման և օգտագործման գործընթացում երաշխավորում է էթիկայի սկզբունքների պահպանումը, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող անձանց վերաբերող տեղեկատվության գաղտնիությունը:

2) Հավաքագրված տեղեկատվությունը, անհրաժեշտության դեպքում, պետք է լինի բաղադրատեղի և օգտագործվի հաշմանդամություն ունեցող անձանց հիմնախնդիրների կարգավորման և առանձին ծրագրերի պլանավորման և իրականացման նպատակով:

2. Սույն հոդվածի 1-ին մասում սահմանված տեղեկատվության հավաքագրումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

## ԳԼՈՒԽ V.

### ՀԱՇՄԱՆԴԱՄ ՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ

#### **Հոդված 28. Բժշկասոցիալական փորձաքննության իրականացումը**

1. Բժշկասոցիալական փորձաքննությունն իրականացնում են բժշկասոցիալական փորձաքննության ոլորտում իրավասու պետական մարմինները, որոնց կազմավորման, գործունեության կարգը և լիազորությունները սահմանում է Հայաստանի Հանրապետության Կառավարությունը:

2. Բժշկասոցիալական փորձաքննության ոլորտում իրավասու պետական մարմինները Հայաստանի Հանրապետության Կառավարության սահմանած կարգով կայացնում են հետևյալ որոշումները՝

1) անձի կենսագործունեության սահմանափակման աստիճանի հիման վրա հաշմանդամություն ունեցող անձ ճանաչելու /"հաշմանդամություն ունեցող երեխա" կարգավիճակ կամ հաշմանդամության խմբի սահմանում/ կամ չճանաչելու վերաբերյալ,

2) հաշմանդամության պատճառի, ժամկետի վերաբերյալ,

3) մահվան պատճառական կապի վերաբերյալ,

4) աշխատունակության կորստի աստիճանի վերաբերյալ,

5) ժամանակավոր անաշխատունակության թերթիկի երկարացման անհրաժեշտության վերաբերյալ:

3. Բժշկասոցիալական փորձաքննության ոլորտում իրավասու պետական մարմինները

որոշում են հաշմանդամություն ունեցող անձի, անհատական կարիքներին համապատասխան, սոցիալական միջոցառումների տեսակները, ձևերը և ծավալները, նրա և (կամ), նրա օրինական ներկայացուցչի մասնակցությամբ մշակում և հաստատում են հաշմանդամություն ունեցող անձի անհատական վերականգնողական ծրագիրը:

4. Բժշկասոցիալական փորձաքննության ոլորտում իրավասու պետական մարմինները սահմանում են 18-ից մինչև 63 տարեկան անձանց և 16-ից մինչև 18 տարեկան աշխատող երեխաների աշխատունակության աստիճանը՝ տոկոսներով:

5. Հաշմանդամության սահմանման կարգը և չափանիշները սահմանում է Հայաստանի Հանրապետության Կառավարությունը:

6. Բժշկասոցիալական փորձաքննության ոլորտում իրավասու պետական մարմինների գործունեության ֆինանսավորումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին:

#### **Հոդված 29. Անձին հաշմանդամ ճանաչելը**

1. Բժշկասոցիալական փորձաքննության ոլորտում իրավասու պետական մարմինն անձին հաշմանդամ է ճանաչում սույն օրենքի պահանջներին, ինչպես

նաեւ Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից սահմանված հաշմանդամության սահմանման չափանիշներին համապատասխան:

2. Հաշմանդամության պատճառական կապերի ցանկը, հաշմանդամության սահմանման չափանիշները, ժամկետները և այլ նորմերը սահմանում է Հայաստանի Հանրապետության Կառավարությունը:

3. Հաշմանդամություն ունեցող անձի վերափորձաքննությունը կատարվում է՝ հաշմանդամության կարգավիճակի համար սահմանված ժամկետը լրանալու կամ նրա առողջական վիճակը վատթարանալու կամ նրա՝ բժշկասոցիալական փորձաքննության որոշման համար հիմք հանդիսացող փաստաթղթերում կեղծիք հայտնաբերվելու կամ բժշկասոցիալական փորձաքննության իրականացման կարգի խախտման կամ հաշմանդամության խմբերի սահմանման չափանիշների խախտման կամ անձի աշխատունակության կորստի սխալ գնահատման դեպքերում կամ անձի և (կամ) նրա օրինական ներկայացուցչի դիմումի համաձայն կամ դատական ակտի հիման վրա:

4. Անժամկետ հաշմանդամություն ունեցող անձի վերափորձաքննությունը կատարվում է՝ նրա բժշկասոցիալական փորձաքննության որոշման համար հիմք հանդիսացող փաստաթղթերում կեղծիք հայտնաբերվելու կամ բժշկասոցիալական փորձաքննության իրականացման կարգի խախտման կամ հաշմանդամության խմբերի սահմանման չափանիշների խախտման կամ անձի աշխատունակության կորստի սխալ գնահատման դեպքերում կամ անձի և (կամ) նրա օրինական ներկայացուցչի դիմումի համաձայն կամ դատական ակտի հիման վրա:

5. Բժշկասոցիալական փորձաքննության ոլորտում իրավասու պետական մարմինների կայացրած որոշումները կարող են բողոքարկվել վարչական կամ դատական կարգով:

6. Վարչական բողոք կարող է բերվել վարչական ակտի ուժի մեջ մտնելու օրվանից եռամսյա ժամկետում:

7. Բժշկասոցիալական փորձաքննության ոլորտում իրավասու պետական մարմինների կայացրած որոշումները ուժի մեջ են մտնում անձին վարչական ակտից քաղվածք-տեղեկանքի տրամադրման հաջորդ օրը:

## ԳԼՈՒԽ VI.

### ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՐՑԵՐՈՎ ԶԲԱՂՎՈՂ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

#### **Հոդված 30. Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող Ազգային հանձնաժողովը և նրա գործունեության նպատակները**

1. Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող Ազգային հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) ստեղծվում է Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշմամբ:

2. Հանձնաժողովը համակարգող մարմին է, որը գործում է սույն օրենքին և իր աշխատակարգին համապատասխան:

3. Հանձնաժողովի նպատակն է՝

1) աջակցել հաշմանդամություն ունեցող անձանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովմանը և դրանց իրացման գործընթացի մոնիտորինգին,

2) ուսումնասիրել համապատասխան իրավական ակտերի ներգործության աստիճանը և կիրառելիությունը,

3) մշակել առաջարկություններ հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման ռազմավարությունների, Տարեկան ծրագրերի, հաշվետվությունների և դրանց կատարումն ապահովող այլ փաստաթղթերի վերաբերյալ,

4) իրականացնել մոնիտորինգ Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայի դրույթների իրագործման նկատմամբ:

#### **Հոդված 31. Հանձնաժողովի խնդիրները և գործառույթները**

Հանձնաժողովն օրենքով և իր աշխատակարգով սահմանված կարգով՝

1) վերլուծում է հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների իրացման ընթացքում ծագած խնդիրները և դրանց լուծման վերաբերյալ մշակում առաջարկություններ,

2) քննարկում է հաշմանդամության իրավիճակի մասին ամենամյա ազգային զեկույցը,

3) համակարգում է հաշմանդամություն ունեցող անձանց հավասար իրավունքների և շահերի պաշտպանության համար պատասխանատու պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմինների և այդ ոլորտում գործող հասարակական, գիտական և այլ կազմակերպությունների համագործակցության աշխատանքները,

4) քննարկում է հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման տարեկան ծրագրի նախագիծը, ինչպես նաև նախորդ տարվա տարեկան ծրագրի կատարման հաշվետվությունը և տալիս առաջարկություններ,

- 5) առաջարկություններ է ներկայացնում ՀՀ Կառավարություն հաշմանդամություն ունեցող անձանց հիմնախնդիրները կանոնակարգող օրենսդրության կատարելագործման ուղղությամբ,
- 6) համագործակցում է պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակական, գիտական, միջազգային և այլ կազմակերպությունների հետ,
- 7) իրականացնում է աշխատակարգով նախատեսված այլ լիազորություններ:

### **Հոդված 32. Հանձնաժողովի կազմավորման կարգը**

1. Հանձնաժողովի կազմը և աշխատակարգը հաստատում է Հայաստանի Հանրապետության վարչապետը:
2. Հանձնաժողովի կազմում ընդգրկվում են հանձնաժողովի նախագահը, քարտուղարը և հավասար թվով ներկայացված՝ հաշմանդամության ոլորտում շահագրգիռ, պատասխանատու պետական կառավարման մարմինների և հասարակական կազմակերպության ներկայացուցիչները:
3. Հայաստանի Հանրապետության Կառավարության լիազոր մարմինը Հանձնաժողովի գործունեությունն ապահովելու նպատակով ստեղծում է Հանձնաժողովի աշխատակազմ:
4. Հանձնաժողովը ունի տարածքային մարմիններ /հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային հանձնաժողովներ:
5. Հանձնաժողովը և նրա տարածքային մարմինները գործում են հասարակական հիմունքներով:
6. Հանձնաժողովը հաստատում է Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային և Երևան քաղաքի հանձնաժողովների, ինչպես նաև փորձագետների աշխատանքային խմբի գործունեության կարգերը:

## ԳԼՈՒԽ VII.

### ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆԵՐԱՌՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ /ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ/

#### **Հոդված 33. Հաշմանդամների սոցիալական ներառման ռազմավարություն /համալիր ծրագիր/**

1. Հաշմանդամների սոցիալական ոլորտի պետական քաղաքականությունն իրականացվում է հաշմանդամների սոցիալական ներառման ռազմավարությամբ (այսուհետ՝ Ռազմավարություն) սահմանված ուղղություններով և ժամկետներում:

2. Ռազմավարության նպատակը հաշմանդամների ինտեգրումն է հասարակություն, հաշմանդամների լիարժեք մասնակցությունը հասարակական կյանքի բոլոր ոլորտներում ապահովելու համար:

Ռազմավարությունը ներառում է առողջապահության, բժշկական, սոցիալական ու հոգեբանական վերականգնման, հանրային կրթության, մատչելիության ապահովման, տրանսպորտի, հաղորդակցության, կրթության, զբաղվածության, մարդկային ռեսուրսների զարգացման, սոցիալական պաշտպանության և այլ բնագավառներ:

3. Ռազմավարությունը հաստատում է Հայաստանի Հանրապետության Կառավարությունը:

4. Ռազմավարությամբ նախատեսված աշխատանքների իրականացման տարեկան համամասնությունները արտացոլվում են հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման տարեկան ծրագրում:

5. Ռազմավարության մշակումը և իրականացումն ապահովվում է հաշմանդամների սոցիալական ներառման բնագավառում լիազորված պետական կառավարման մարմինը:

#### **Հոդված 34. Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման տարեկան ծրագիրը**

1. Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման ուղղությամբ տարվող աշխատանքներն իրականացվում են Տարեկան ծրագրով սահմանված ժամկետներում և կարգով:

2. Տարեկան ծրագրի նպատակն է հաշմանդամության ոլորտում տարբեր գերատեսչությունների և կազմակերպությունների կողմից իրականացվող բոլոր միջոցառումները ներկայացնել մեկ ընդհանրական փաստաթղթում՝ դրանց փոխհամաձայնեցված իրականացումը ապահովելու համար:

3. Տարեկան ծրագիրը Հայաստանի Հանրապետության Կառավարությունն Ազգային ժողով է ներկայացնում պետական բյուջեի նախագծի կազմում:

Տարեկան ծրագրի կատարման մասին հաշվետվությունը հերթական տարվա պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվության բաղկացուցիչ մասն է:

## **ԳԼՈՒԽ VII.**

### **ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՒՅՆ ՕՐԵՆՔԸ ԽԱԽՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ**

**Հոդված 35. Պատասխանատվությունը սույն օրենքի դրույթները խախտելու համար**

Սույն օրենքի դրույթների խախտումն առաջացնում է օրենքով սահմանված պատասխանատվություն:

## **ԳԼՈՒԽ VIII.**

### **ԵԶՐԱՓՄԱԿԻՉ ԴՐՈՒՅԹ**

**Հոդված 36. Եզրափակիչ դրույթ**

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը, բացառությամբ 28-րդ հոդվածի 4-րդ կետի, 30-րդ հոդվածի 6-րդ ենթակետի որոնք ուժի մեջ են մտնում 2014 թվականին, 14-րդ հոդվածի 2-6 կետերը, 22-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերի, որոնք ուժի մեջ են մտնում 2015 թվականից:

5-րդ հոդվածի 1-ին կետի 13-րդ ենթակետում նշված միջոցառումների իրականացման հնարավորության հարցը քննարկել յուրաքանչյուր տարվա Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նախագծի կազմման ժամանակ:

2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել “ Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին” Հայաստանի Հանրապետության 1993 թվականի ապրիլի 14-ի Հ.Ն -0800-I օրենքը: